Կոչ է անում դադարեցնել ԳԱԱ-ի ընտրությունները

Ֆիզմաթ գիտությունների դոկտոր Գրիգոր Բարսեղյանը բաց նամակ է հղել ՀՀ իշխանություններին՝ կոչ անելով դադարեցնել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ընտրությունները և բարեփոխումներ իրականացնել գիտական կյանքում: «Հայաստանի պայմաններում ակադեմիկոսների ինստիտուտը կառուցված է մի շարք անհեթեթությունների վրա և, փաստորեն, կործանում է Հայաստանի գիտության ապագան: Այդ փաստը հայտնի է և հիմնավորված, ամեն դեպքում, մեր քննադատությունները երբեք չեն վիճարկվել: Ակադեմիան հայտարարել է նոր ընտրություններ: Ակադեմիկոսներին կարելի է հասկանալ, գիտությանը նրանք հիմնականում չեն զբաղվում, այնպես որ, հաճույքով կկոտրեն նրանց կյանքը, ովքեր դրանով զբաղվում են, իսկ մյուս կողմից, կզբաղվեն շահավետ ակադեմիական առևտրով: Սակայն նախքան գումար տրամադրելը և ակադեմիական նման առևտուր-խաղերը խրախուսելը, պետությունը պարտավոր է բացատրություն տալ, թե ինչու է բավարարում ակադեմիկոսների քմահաճույքները և, դրանով իսկ, իր վրա վերցնում Հայաստանի գիտության թշվառ վիճակի պատասխանատվության մի մասը՝ 1. Ակադեմիկոսների ինստիտուտը նոնսենս է բարոյական տեսակետից (քանի որ չի կարելի ցմահ ղեկավարելու իրավունք տալ, ինչպես Ակադեմիայի դեպքում է): 2. Ակադեմիկոսների ինստիտուտը նոնսենս է պետական տեսակետից (քանի որ չի կարելի ցմահ հավելավճարներ տալ, ինչպես Ակադեմիայի դեպքում է): 3. Ակադեմիկոսների ինստիտուտը նոնսենս է գիտական տեսակետից (քանի որ գիտնականի իրական դեմքը կարող է որոշվել միայն և միայն տվյալ մասնագիտության միջազգային նեղ գիտական համայնքի կողմից, և ոչ թե ակադեմիկոսների խմբի կողմից, որոնք չունեն համապատասխան որակավորում, ավելին՝ որոնք ընտրություններում անշնական շահ են հետապնդում): 4. Ակադեմիկոսների ինստիտուտը քայքայիչ ազդեցություն ունի գիտության վրա (քանի որ գիտնականները փորում են իրար տակ, որպեսզի ակադեմիկոս դառնան, փոխանակ համախմբեն ուժերը գիտական նորանոր ձեռքբերումների և միջազգային դրամաշնորհներ ստանալու համար): 5. Ակադեմիկոսների ինստիտուտը չափազանց անբարոյական ազդեցություն է գործում հասարակության վրա՝ տալով անհեթեթ բարձր ֆինանսական հավելավճարներ (քանի որ նա, ով ակադեմիկոս է ընտրվել, ստանում է մոտ 300% ավելի հավելավճար, չհաշված աշխատավարձը, ի տարբերություն նրանց, ովքեր չեն ընտրվել կամ չեն ցանկացել մասնակցել ակադեմիական ընտրություններին»,- ասված է նամակում:

«Google»-ի նոր հրաժարումը